

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արդարադատության նախարարության
վերահսկողական վարչության առաջին բաժնի պետ,
Պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է վարչական արդարադատության առանձնահատկությունները պայմանավորող ելակետային սկզբունքների վերհանմանը և դրանց համակողմանի ուսումնասիրությանը: Մասնավորապես, հոդվածում ներկայացվել են վարչական արդարադատության սկզբունքների շուրջ տարբեր իրավագետների ընկալումները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տարբեր պետությունների օրենսդրությամբ նախատեսված առանձնահատկությունները, դրանց շուրջ առկա խնդիրները:

Միաժամանակ, հոդվածում անդրադարձ է կատարվել վարչական արդարադատության կարևորագույն սկզբունքների շուրջ առկա խնդրահարույց օրենսդրական կարգավորումներին, համեմատականներ կատարվել այլ դատավարական սկզբունքների հետ, առաջ քաշվել եզրահանգումներ՝ ներկայացվելով համապատասխան առաջարկություններ:

Հիմնարար- վարչական արդարադատության սկզբունքներ, «ex officio» սկզբունք, մրցակցության սկզբունք, անօրինչականության սկզբունք, վարչական դատավարություն, մասնագիտացված արդարադատություն:

Արդի ժամանակներում վարչական արդարադատությունը, հանդիսանալով մասնագիտացված արդարադատության կարևորագույն և անբաժանելի մասը, առանձնանում է իրեն հատուկ մի շարք բնորոշ գծերով և ուրույն հատկանիշներով, որոնք թույլ են տալիս հստակ տարանջատելու այն արդարադատության մյուս տեսակներից՝ միաժամանակ ընդգծելով վերջինիս կարևորությունը և նշանակությունը:

Վարչական արդարադատության հիմքում դրված ղեկավար սկզբունքներն ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն արտացոլում են վարչական արդարադատության առանձնահատկությունները և հանդիսանում են դրա արդյունավետ իրականացման միջոցները: Ինչպես հայտնի է, հռոմեական իրավունքից՝ «սկզբունքն ամեն ինչի կարևոր մասն է (principium est potissima pars cuiusque rei)»: Համաձայն Ս. Վ. Նիկիտինայի բնորոշման՝ արդարադատության սկզբունքներն ընդհանուր նորմատիվ իրավական դրույթներ են, որոնք սահմանում են արդարադատության կազմակերպման և իրականացման համար ֆունդամենտալ հիմքեր՝ նպատակաուղղված լինելով դատական պաշտպանության իրավունքի ապահովմանը (արդյունավետ իրականացմանը)¹: Թերևս հարկ է կարևորել, որ վարչական արդարադատությունն իրեն հատուկ սկզբունքների կիրառմամբ է հասնում, մի կողմից, անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնմանը, մյուս կող-

մից՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող հակաօրինական վարչարարական տարբեր դրսևորումների կանխարգելմանը և վերացմանը, մեկ այլ կողմից՝ հանրային իշխանությամբ օժտված մարմինների և անձանց միջև առաջացող փոխհարաբերություններում օրենքի գերակայության ապահովմանը:

Վարչական արդարադատության իրականացման նպատակը բացահայտվում և արտահայտվում է դրա ելակետային սկզբունքների՝ գործնականում կենսագործման միջոցով, որոնք միաժամանակ հանդիսանում են հատուկ կանոններ վարչական դատավարության իրականացման տարբեր ընթացակարգերում՝ միտված լինելով հասնելու վարչաիրավական բնույթի վեճի արդյունավետ լուծմանը: Վարչական արդարադատության իրականացմանն ուղղված գրեթե ցանկացած նորմ կամ ընթացակարգ փոխկապակցված է որևէ դատավարական սկզբունքի հետ:

Ըստ Յու. Ն. Ստարիլովի՝ այս կամ այն իրավական վեճը քննելիս դատական գործունեության հիմքն են հանդիսանում դատավարության սկզբունքները²: Դատավարական սկզբունքների միջոցով են որոշվում վարչական արդարադատության էությունը և նպատակը, դատավարության տարբեր ընթացակարգերի կազմակերպման ձևերը և կարգերը, դատավարական տարբեր ընթացակարգերում դատարանի դերակատարության հնարավո-

րությունները և չափը, սահմանագծվում դատարանի, դատավարության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, դատավարության մասնակիցների՝ միմյանց և դատարանի հետ փոխհարաբերությունների շրջանակը, երաշխավորվում դատավարության մասնակիցների դատավարական իրավունքների և շահերի իրացումը:

Նշվածի համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյո՞ք վարչական արդարադատության և վարչական դատավարության իրականացման համար կարող են գործել միևնույն սկզբունքները և թե արդյո՞ք դրանք նույնական են: Հարցի կապակցությամբ հարկ ենք համարում հիշատակել «վարչական դատավարություն» հասկացության շուրջ Ն. Գ. Սալիշևայի կողմից արված այն բնութագրումը, ըստ որի՝ վարչական դատավարությունը համարվում է վարչական արդարադատության ինստիտուտի ընթացակարգային (պրոցեսուալ) բաղադրիչը³: Ըստ Վ. Վ. Յարևկովի՝ վարչական դատավարության սկզբունքները վարչական դատավարության իրավունքի նորմերում ամրագրված դրույթներն են, որոնք ընկած են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերով արդարադատության իրականացման հիմքում և արտահայտում են վարչական դատավարության առանձնահատկությունները: Մեջբերված տեսակետներից կարող ենք եզրակացնել, որ վարչական դատավարությունը համարվում է վարչական արդարադատության բաղկացուցիչ մասը, իսկ վարչական դատավարության սկզբունքներն ընկած են վարչական արդարադատության իրականացման հիմքում, ուստի, վարչական արդարադատության և վարչական դատավարության սկզբունքները մեծամասամբ համընկնում են: Միաժամանակ, վարչական դատավարությունը վարչական արդարադատության իրականացման միջոց է, ձև, որը կոչված է իրագործելու վարչական արդարադատության գլխավոր նպատակները:

Տարբեր պետությունների վարչական դատավարությունը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանցում նախատեսված սկզբունքները միատեսակ ձևակերպված չեն, սակայն բովանդակային առումով շատ մոտ են, որոշ պետությունների դեպքում դրանք անվանվում են այլ կերպ կամ դրանց վերաբերյալ ձևակերպումներն ավելի լայնածավալ կամ փոքրածավալ են, իսկ որոշ դեպքերում էլ՝ դրանք գետեղված են մի քանի իրավական ակտերում: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Ե. Վ. Միցկայան, նշելով, որ տարբեր պետությունների օրենսդրությամբ սկզբունքներն իրենց անվանում-

ներով և ձևակերպումներով կարող են տարբեր լինել, սակայն իմաստով նույնը⁴:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված են թվով յոթ սկզբունքներ (դատավորների անկախության, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության, վարչական գործերի օրինական և արդարացի քննության ու լուծման, ողջամիտ ժամկետում վարչական դատավարության իրականացման և դատական ակտերի կատարման, դատական վարույթի դոմբաց իրականացման և հրապարակայնության, դատական վարույթի անմիջականորեն իրականացման, դատարանի ակտիվ դերակատարմամբ կողմերի մրցակցության և հավասարության հիման վրա վարչական դատավարության իրականացման), իսկ Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված են տասը սկզբունքներ, որոնք բովանդակային իմաստով հիմնականում կրկնում են Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքները և դրանից բացի նախատեսում որոշ սկզբունքներ՝ կապված դատական ակտերի պարտադիրության, բողոքարկման և դատական ծախսերի փոխհատուցման հետ⁶:

Ի տարբերություն մյուս պետությունների՝ Վրաստանի վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված են ընդամենը երեք սկզբունքներ՝ կողմերի դիսպոզիտիվության (տնօրինչականության), մրցակցության և քննչական (ինկվիզիցիոն) սկզբունքները: Հիշյալ սկզբունքը հանդիպում ենք նաև Ֆրանսիայի և Ադրբեջանի վարչական դատավարության օրենսգրքերում⁸: Վերջինս, սակայն, իր բովանդակությամբ առավել նման է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք)՝ «Վարչական դատավարության սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխով օրենսդիրը նախատեսել է ընդամենը հինգ՝ փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու, կողմերի իրավահավասարության հիման վրա վարչական դատավարության իրականացման, գործերի բանավոր քննության, դատական վարույթի հրապարակայնության և լեզվի սկզբունքներ: Պետք է նկատել, որ Օրենսգրքով առանձնացված հինգ սկզբունքներից, ի տարբերություն մնացածի, փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին կարելի է հանդիպել բացառապես վարչական դատավարությունում, որի հիման վրա կառուցված է ամբողջ վարչական-դատավարական

ընթացակարգային առանձնահատկությունները և Վարչական դատարանի յուրատեսակ պարտականությունները՝ արդարադատության իրականացման ընթացքում⁹: Զննարկվող սկզբունքի վերաբերյալ դեռևս 2008թ. կարծիք է արտահայտել Սահմանադրական դատարանը՝ նշելով, որ առանձին սկզբունքներ էականորեն տարբերվում են քաղաքացիական դատավարության սկզբունքներից, մասնավորապես՝ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքը վարչական դատավարությանը բնորոշ կարևորագույն սկզբունքներից է¹⁰:

Փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի վերաբերյալ հիմնական կարգավորումը տրված է Օրենսգրքի՝ «Փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը» վերտառությամբ 5-րդ հոդվածով, որի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նշվածից պարզ է դառնում, որ Վարչական դատարանի կողմից նման ակտիվ դերակատարմամբ գործողություններ կատարելը ոչ թե պարզապես իրավունք կամ հայեցողություն է, այլ՝ պարտականություն, որը կատարելու համար դատարանն անհրաժեշտության դեպքում պետք է միջամտություն ցուցաբերի դատավարական տարբեր գործընթացներին՝ կատարելով գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե (ex officio) պարզելու գործառույթը:

Դատարանի այսպիսի անսովոր ակտիվությունը թելադրված է վարչական դատավարության կողմերի իրավական և փաստացի կարգավիճակով: Ինչպես նշում է Գ. Բ. Դանիելյանը՝ թեպետ քննարկվող սկզբունքի շարադրանքից ուղղակիորեն չի բխում հատկապես ֆիզիկական և իրավաբանական անձանց փաստացի իրավահավասարությունն ապահովելու անհրաժեշտությունը, սակայն դա պարզ է դառնում Օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծության արդյունքում¹¹: Խնդիրն այն է, որ դատավարության կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձն իր կարգավիճակով գործնականում չի կարող ինքնըստինքյան հավասարվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, քանի որ վերջիններս ի սկզբանե այլ իրավական հնարավորություններ ունեն, և կողմերի միջև իրավահավասարություն ձևավորելու նպատակով, հարկ է, որ հան-

րային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով դատարանն իր ակտիվ միջամտությամբ նպաստի առաջացած անհավասարության թուլացմանը՝ ձեռնամուխ լինելով ապահովելու գործի համար անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը, ինչպես նաև տվյալ սկզբունքի հետ առնչություն ունեցող այլ դատավարական գործողությունների կատարմանը: Հատկանշական է, որ ըստ Ա. Բ. Ջեյնցովի և Օ. Ա. Յաստրեբովի՝ վարչական դատավարությունում՝ որպես ավելի թույլ կողմ հանդիսացող անհատին փաստացի առավելությունը տրամադրվում է ոչ թե հակառակ կողմի համաձայնությամբ կամ դատարանի հայեցողությամբ, այլ՝ դատավարական կանոնով¹²:

Հարկ է նկատել, որ քննարկվող սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները չեն սահմանափակվում միայն գործի փաստական հանգամանքները պարզելով, այլ նաև ընդգրկում են դատավարական գործողությունների մի ամբողջ շրջանակ: Թեև օրենսգրքում նշված սկզբունքը վերնագրված է որպես «Փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու» սկզբունք, այնուամենայնիվ, դրա տարբեր հոդվածների ուսումնասիրությունից պարզվում է, որ դատարանի կողմից տվյալ սկզբունքի իրացումն իր մեջ ներառում է ոչ միայն գործի փաստական, այլև՝ իրավական հիմքերը պարզելուն և բացահայտելուն ուղղված դատավարական գործողություններ: Տվյալ հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ իր որոշման մեջ այն դիտարկելով որպես քննարկվող սկզբունքի շրջանակներում իրականացվող դատարանի համար նախատեսված պարտադիր գործողություն՝ նշելով, որ վարչական դատավարությունում հայցվորը չի կրում հայցադիմումում հայցի իրավական հիմքերը մատնանշելու օրենսդրական պարտականություն: Օրենսդիրը հայցվորի համար սահմանել է պարտականություն՝ հայցադիմումում մատնանշել միայն իր պահանջը և այն հիմնավորող փաստարկները: Մյուս կողմից, վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների և անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ դարձնելու և վերջիններիս նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով օրենսդիրը վարչական դատարանին օժտել է ակտիվ դերակատարությամբ¹³: Ըստ այդմ, վարչական դատարանը պարտավոր է ինքնուրույն որոշել

www.aradaradutyunjournal.com

վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը, ապա ձեռնարկել համարժեք միջոցներ՝ գործն ի պաշտոնն քննելու համար¹⁴ :

Ներկայացվածի համատեքստում, համաձայն լինելով Լ. Պետրոսյանի այն առաջարկի հետ, որ Օրենսգրքում քննարկվող սկզբունքն անհրաժեշտ է ամրագրել որպես գործի ի պաշտոնն քննության սկզբունք¹⁵, միաժամանակ, կարծում ենք, որ առաջարկվող փոփոխությամբ սկզբունքին առավել ընդհանրական անվանում տալն արդարացված է նաև այն հանգամանքով, որ վերոնշյալի լույսի ներքո տվյալ սկզբունքի շրջանակներում դատարանը պարտավորվում է ոչ միայն միջոցներ ձեռնարկել գործի փաստական հանգամանքները պարզելու ուղղությամբ, այլ նաև սեփական նախաձեռնությամբ որոշել վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը¹⁶ :

Հարկ է նշել, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու սկզբունքը դրսևորվում է նաև վերաքննության փուլում. մասնավորապես՝ Օրենսգրքի 144-րդ հոդվածի ուսումնասիրության արդյունքներով կարող ենք առանձնացնել, որ Վերաքննիչ դատարանը. 1. դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում, 2. ընդունում է նաև դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, 3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում այդ փաստը չի վիճարկվում, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն:

Կարծում ենք՝ վերաքննության փուլում դատարանին անհրաժեշտ է տրամադրել առավել նեղ լիազորություններ, քանի որ վերաքննիչ ատյանի առաքելությունն ուղղված է ոչ թե գործի կրկնակի քննությանը, այլ՝ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված սխալների հայտնաբերմանը և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շտկմանը: Մասնավորապես՝ վերաքննության փուլում դատարանին նոր ապացույցներ ներկայացնելու թույլատրելիության պարագայում դատավարության մասնակիցները ստորադաս ատյանում չեն փորձի լիարժեքորեն ներդնելու իրենց ջանքերը՝ փորձելով հասնելու գործի արդյունավետ քննությանը՝ հույս ունենալով բացթողումները լրացնելու վերաքննության փուլում:

Շատ պետություններում (օրինակ՝ Ֆրանսիայում) գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու սկզբունքն իր առավել «ծայրահեղ» դրսևորմամբ հայտնի է որպես քննչական

(ինկվիզիցիոն) սկզբունք, ըստ որի՝ դատարանը սեփական նախաձեռնությամբ կատարում է իրավաբանական փաստերի ու հարաբերությունների հետազոտում՝ ձգտելով ամեն հնարավոր միջոցներով պարզելու խնդրի լուծման համար անհրաժեշտ հանգամանքները՝ կաշկանդված չլինելով շահագրգիռ անձանց ներկայացրած դիրքորոշումներով ու ապացույցներով: Տվյալ սկզբունքի իրացման շրջանակներում դատավորը կարող է հանձնարարել կողմին տրամադրելու գործի համար էական նշանակություն ունեցող փաստաթղթեր, անհրաժեշտությունից ելնելով նշանակել փորձաքննություններ, կատարելու հարցումներ, կողմերից պահանջելու ապացույցներ:

Դատավարագիտության մեջ քննչական (ինկվիզիցիոն) սկզբունքին՝ որպես հակառակ, հայտնի է մրցակցության սկզբունքը: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն սահմանված չեն մրցակցության և տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքները, սակայն դրանք անուղղակիորեն դրսևորվում են Օրենսգրքի որոշ դրույթներում: Որոշ իրավագետների կողմից երբեմն հնչեցվում է այնպիսի թյուր կարծիք, ըստ որի՝ վարչական դատավարության՝ «ex officio» հիմնարար սկզբունքի առկայությամբ պայմանավորված վարչական դատավարությունում չի կարող գործել մրցակցային սկզբունքը: Դատավարագետները, ուսումնասիրելով մրցակցության սկզբունքի հարաբերակցությունը վարչական դատավարության այլ սկզբունքների հետ, առանձնացնում են իրավական այն հարցադրումը, թե արդյոք «ex officio» սկզբունքի ամրագրումը և ըստ այդմ դատարանին ակտիվ լիազորություններով օժտելը չի խոչընդոտում վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքի իրացմանը¹⁷ :

Նմանաբնույթ հարցադրումների վերաբերյալ կարող ենք նշել, որ թեև վարչական դատավարությունում մրցակցության սկզբունքը չունի այնքան մեծ կիրառելիություն, որքան քաղաքացիական և քրեական դատավարություններում, սակայն դա դեռևս չի նշանակում, որ «ex officio» սկզբունքի առկայության դեպքում դատավարությունում կարող են խոչընդոտներ առաջանալ մրցակցության սկզբունքի կիրառման համար: Օրինակ, մրցակցության սկզբունքի որոշակի դրսևորումների կարելի է հանդիպել Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-2-րդ մասերում, մասնավորապես՝ նշված կարգավորումներով մի կողմից օրենսդիրը դատավարության կողմի վրա դրել է պարտականություն՝ ներկայացնելու իրեն հասանելի այն բոլոր ապացույցները, որոն-

ցով հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, մյուս կողմից՝ վարչական մարմնի համար սահմանել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած բոլոր ապացույցները ներկայացնելու պարտականություն, որոնցով հիմնավորվում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները: Այսինքն՝ տվյալ նորմերի ուսումնասիրությունից հետևում է, որ նախ և առաջ դատավարության կողմեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց և վարչական մարմինների համար երկուստեք նախատեսված են մրցակցային հնարավորություններ, որոնք համապատասխանաբար չկատարելու դեպքում նոր միայն կգործեն Օրենսգրքի 29-րդ հոդվածով սահմանված ապացուցման բեռի կանոնները¹⁸:

Օրենսգրքով առանձին ամրագրում չի ստացել ինչպես մրցակցության, այնպես էլ՝ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը: Վճռաբեկ դատարանն իր կողմից ընդունված մի շարք որոշումներում անդրադառնալով հիշյալ սկզբունքին՝ նշել է, որ այն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները¹⁹: Վճռաբեկ դատարանը միաժամանակ հավելել է, որ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը, ինքնուրույն որոշել հայցի հիմքը և առարկան:

Չնայած այն հանգամանքին, որ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն իրապես արտահայտվում է վարչական դատավարության տարբեր դրույթներում (հայցադիմումի ներկայացում, հայցից հրաժարում, հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխություն, պահանջների միացում, միջնորդությունների ներկայացում, դատարանի կողմից հայցվորի համաձայնության հիման վրա ոչ պատշաճ պատասխանողի փոխարինում, հաշտության համաձայնության գալ և այլն), այդուհանդերձ, այն ունի որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված վարչական դատավարությունում «ex officio» սկզբունքի շրջանակներում դատարանի ակտիվ դերակատարմամբ: Ամեն դեպքում, կարծում ենք, որ դատարանի կողմից ցուցաբերվող նման ակտիվությունը կարող է որոշ դեպքերում անձի համար ունենալ ընդամենը ուղ-

ղորդող նշանակություն, սակայն՝ ոչ պարտադրող, քանի որ հակառակ դեպքում կարող է սահմանափակվել դատավարության մասնակցի՝ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքից օգտվելու հնարավորությունը: Նման մոտեցում կարելի է նկատել նաև Վճռաբեկ դատարանի կողմից կայացված մի շարք որոշումներում, ըստ որոնց՝ Վարչական դատարանի կողմից առաջարկված պատշաճ հայցատեսակով ոչ պատշաճ հայցատեսակը չփոխարինելու պարագայում դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ²⁰, այսինքն՝ դատարանի կողմից առաջարկված հայցատեսակը չընտրելու և առաջնային ընտրած հայցատեսակը կրկին պնդելու դեպքում, Վարչական դատարանը պարտավոր է գործի քննությունը շարունակել հայցվորի ընտրած հայցատեսակի շրջանակներում:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ կարող ենք առանձնացնել հետևյալը.

1. վարչական արդարադատության առանձնահատկություններն, առաջին հերթին, պայմանավորված են դրա հիմքում ընկած ելակետային սկզբունքներով, որոնց հիման վրա են կառուցված վարչական դատավարությանը հատուկ մի շարք դատավարական ընթացակարգեր և կանոններ,
2. վարչական արդարադատության և վարչական դատավարության սկզբունքները մեծամասամբ համընկնում են,
3. թեև տարբեր պետությունների վարչական դատավարությունը կարգավորող իրավական ակտերով նախատեսված դատավարական սկզբունքները չունեն միևնույն անվանումները, սակայն բովանդակային իմաստով դրանք շատ մոտ են,
4. վարչական արդարադատության իրականացմանն օժանդակող և վերջինիս առաքելությունն ընդգծող առանձնահատուկ սկզբունքն է հանդիսանում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքը: Հաշվի առնելով Օրենսգրքով հիշյալ սկզբունքի հիման վրա դատարանի վրա դրված մի շարք կարևոր պարտականությունների բովանդակությունը՝ այդ թվում՝ ոչ միայն գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու, այլ նաև սեփական նախաձեռնությամբ վեճի լուծման համար կիրառելի իրավանորմերը որոշելու պարտականությունները՝ առաջարկում ենք «ex officio» սկզբունքին դատավարությամբ տալ առավել ընդհանրական անվանում,
5. գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքը վարչա-

կան դատավարությունում գործում է մաս վերաքննության փուլում: Կարծում ենք՝ դրա շրջանակներում, ի թիվս այլնի, վերաքննության փուլում դատավարության մասնակիցների կողմից դատարանին նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքն անհրաժեշտ է սահմանափակել, քանի որ վերաքննիչ ստյանի գործունեությունն ուղղված է ոչ թե գործի կրկնակի քննությանը, այլ՝ առաջին ստյանի դատարանի կողմից թույլ տրված սխալների հայտնաբերմանը և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շտկմանը:

6. Օրենսգրքի 2-րդ գլխում վարչական դատավարության սկզբունքների ամրագրումը դեռևս չի նշանակում, որ դրանք սպառիչ են և չեն կարող գործել այլ դատավարական սկզբունքներ: Չնայած այն հանգամանքին, որ Օրենսգրքով հատուկ ամրագրված չեն մրցակցության և դիսպոզիտիվության սկզբունքները, այնուամենայնիվ, դրանք դրսևորվում են Օրենսգրքի տարբեր կարգավորումներում:

7. Վարչական դատարանի կողմից դատավարության մասնակիցների միջև ի սկզբանե առաջացած անհավասարությունը մեղմելու ուղղությամբ ձեռնարկվող դատավարական գործողությունները

պետք է լինեն համաչափ և չպետք է իրացվեն այն աստիճան, որ բացառվի կողմերի միջև մրցակցությունը:

8. Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն արտահայտվում է վարչական դատավարության տարբեր ընթացակարգերում, սակայն ունի որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված «ex officio» սկզբունքի առկայությամբ:

Այսպիսով, վարչական արդարադատության՝ որպես մասնագիտացված արդարադատության առանձնահատկությունները մեծապես արտահայտվում են դրա իրականացման հիմքում ընկած սկզբունքների միջոցով, որոնց օժանդակությամբ ապահովվում են վարչական արդարադատության կարևորագույն նպատակները՝ հասնելով հանրային-իշխանական լիազորություններով օժտված մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև առաջացած վեճերի արդարացի և ճշմարիտ լուծմանը:

¹ Տե՛ս, С. В. Никитин, Административное судопроизводство: учебник, Москва, 2018, С. 21.

² Տե՛ս, Старилов Ю. Н., К эффективному правосудию и надлежащей судебной защите через специализацию правосудия, административно-процессуальный аспект, ФГБОУ ВПО, Российская правовая академия Министерства юстиции Российской Федерации, Модернизация судебной системы в условиях международной интеграции, проблемы и перспективы. Сборник научных статей. Под ред. О. И. Александровой, Ю. В. Мишальченко, Е. В. Трофимова. Санкт Петербург. Дитон, 2014, С. 41–52.

³ Տե՛ս, Салищева Н. Г., Проблемы развития административной юстиции в России, Административное судопроизводство в Российской Федерации, развитие теории и формирование административно-процессуального законодательства, отв. ред. Ю. Н. Старилов, Воронеж, 2013. Вып. 7., С. 713.

⁴ Տե՛ս, Мицкая Е. В., О сущности и принципах административной юстиции, Наука. 2020. N 1 (64), С. 20.

⁵ Տե՛ս, Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 08.03.2015թ., http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/ (28.03.2022թ. դրությամբ)

⁶ Տե՛ս, Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 06.07.2005թ., <https://cis-legislation.com/document.fwx?rgn=10720> (28.03.2022թ. դրությամբ)

⁷ Տե՛ս, Վրաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 23.07.1999թ., <https://matsne.gov.ge/en/document/view/16492?publication=77> (28.03.2022թ. դրությամբ)

⁸ Տե՛ս, Ադրբեջանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդված, ընդունված 30.06.2009թ., <https://www.legislationline.org/download/id/4030/file/Административный-Процессуальный%20одекс%202010.pdf> (28.03.2022թ. դրությամբ)

⁹ Նշվածից բացառություն է կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ հայցային վարույթ հանդիսացող ընտանեկան (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ գլուխ), պաշտպանական որոշման (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.1-րդ գլուխ), ինչպես նաև ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ գլուխ) գործերով վարույթները, որոնց դեպքում օրենսդիրը նախատեսել է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու պարտականություն: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ՀՀ քաղաքացիական դատավարությամբ այն նախատեսված չէ որպես սկզբունք:

¹⁰ Տե՛ս, Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ ՍԳ-Ո-780 որոշումը:

¹¹ Տե՛ս, Գանիեյան Գ. Բ., «Վարչական վարույթ և դատավարություն» ուսումնական ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2011թ., էջ 171-172:

¹² Տե՛ս, Зеленцов А. Б., Ястребов О. А., Судебное административное право (учебник для студентов вузов, обучающихся по специальности), Юриспруденция, Москва: 2017, С. 146.

¹³ Նման բովանդակությամբ սահմանում է տվել ռուս իրավագետ Անատոլյեվնա Շ. Ե.-ն՝ միաժամանակ «ex officio» սկզբունքը համարելով վարչական դատավարության առանցքային սկզբունքներից մեկը: Տե՛ս Анагольевна Ш. Е. К вопросу о роли суда при реализации принципа состязательности и равноправия сторон в административном судопроизводстве, Бизнес в законе. 2011, N1, С. 111.

¹⁴ Տե՛ս, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018 թվականի որոշումը:

¹⁵ Տե՛ս, Պետրոսյան Լ., Վարչական դատարանում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացման որոշ հիմնախնդիրներ, «Արդարադատություն» գիտական հանդես, N 1 (53), 2021, Երևան, էջ 62:

¹⁶ Եզրահանգումը հիմնավորվում է նրանով, որ Վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն (Օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ): Քննարկվող սկզբունքի մեկ այլ դրսևորում կարելի է համարել, երբ Վարչական դատարանը, քննության առնելով նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ դիմումը, պարզում է վիճարկվող ակտի համապատասխանությունը նաև դիմումում չնշված այլ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) Օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մաս):

¹⁷ Տե՛ս, Henrichsen C., Administrative Justice in a Scandinavian Legal Context: From a Liberal and a Social State to a Market State or a Milieu State. Administrative Justice in Context, Ed. Michael Adler, London, Hart Publishing, Bloomsbury Collections, 2010, էջ 321–350:

¹⁸ Հարկ ենք համարում ընդգծել, որ Օրենսգրքի 29-րդ հոդվածով նախատեսված ապացուցման բեռի կանոնները գործում են միայն այն դեպքում, երբ ներկայացված չեն լինում ապացույցներ, կամ ներկայացված են լինում ապացույցներ, սակայն ոչ լիարժեք, և, դատարանի գնահատմամբ, գործի ելքի վրա ազդեցություն ունեցող որևէ փաստ մնում է չապացուցված:

¹⁹ Տե՛ս, օրինակ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/3271/05/12 վարչական գործով 18.07.2014թ., թիվ ՎԳ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018թ., թիվ ՎԳ/4650/05/16 վարչական գործով 06.10.2020թ. և թիվ ՎԳ/5599/05/20 վարչական գործով 25.06.2021թ. որոշումները:

²⁰ Տե՛ս, օրինակ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016թ., թիվ ՎԳ/0229/05/15 վարչական գործով 20.07.2017թ. որոշումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռուսաստանի Գաշնության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 08.03.2015թ., http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/ (28.03.2022թ. դրությամբ):

2. Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 06.07.2005թ., <https://cis-legislation.com/document.fwx?rgn=10720> (28.03.2022թ. դրությամբ):

3. Վրաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, ընդունված 23.07.1999թ., <https://mat-sne.gov.ge/en/document/view/16492?publication=77> (28.03.2022թ. դրությամբ):

4. Ադրբեջանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդված, ընդունված 30.06.2009թ., <https://www.legislationline.org/download/id/4030/file/Административный-Процессуальный%20одекс%202010.pdf> (28.03.2022թ. դրությամբ):

5. Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. թիվ ՍԳ-Ո-780 որոշում:

6. Գանիեյան Գ. Բ., «Վարչական վարույթ և դատավարություն» ուսումնական ձեռնարկ, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2011թ., էջ 171-172:

7. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018 թվականի որոշում:

8. Պետրոսյան Լ., Վարչական դատարանում «ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացման որոշ հիմնախնդիրներ, «Արդարադատություն» գիտական հանդես, N 1 (53), 2021, Երևան:

9. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/3271/05/12 վարչական գործով 18.07.2014թ., թիվ ՎԳ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018թ., թիվ ՎԳ/4650/05/16 վարչական գործով 06.10.2020թ. և թիվ ՎԳ/5599/05/20 վարչական գործով 25.06.2021թ. որոշումներ:

10. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016թ., թիվ ՎԳ/0229/05/15 վարչական գործով 20.07.2017թ. որոշումներ:

11. Никитин С. В., Административное судопроизводство: учебник, Москва, 2018.

12. Стариков Ю. Н., К эффективному правосудию и надлежащей судебно-правовой зашите через специализацию правосудия, административно-процессуальный аспект, ФГБОУ ВПО, Российская правовая академия Министерства юстиции Российской Федерации, Модернизация судебной системы в условиях международной интеграции, проблемы и перспективы. Сборник научных статей. Под ред. О. И. Александровой, Ю. В. Мишальченко, Е. В. Трофимова.

Санкт Петербург. Дитон, 2014.

13. Салищева Н. Г., Проблемы развития административной юстиции в России, Административное судопроизводство в Российской Федерации, развитие теории и формирование административно-процессуального законодательства, отв. ред. Ю. Н. Стариков, Воронеж, 2013. Вып. 7..

14. Ярков В. В., Административное судопроизводство, Учебник для студентов высших учебных заведений, Уральский государственный юридический университет, Екатеринбург, Москва, 2016.

15. Мицкая Е. В., О сущности и принципах административной юстиции, Наука. 2020. N 1 (64)..

16. Зеленцов А. Б., Ястребов О. А., Судебное административное право (учебник для студентов вузов, обучающихся по специальности), Юриспруденция, Москва: 2017.

17. Анатольевна Ш. Е., К вопросу о роли суда при реализации принципа состязательности и равноправия сторон в административном судопроизводстве, Бизнес в законе. 2011, N1.

18. Henrichsen C., Administrative Justice in a Scandinavian Legal Context: From a Liberal and a Social State to a Market State or a Milieu State. Administrative Justice in Context, Ed. Michael Adler, London, Hart Publishing, Bloomsbury Collections, 2010.

Петрос Варданян

Начальник первого отдела контрольного департамента министерства юстиции.
Соискатель Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Особенности системы административной юстиции и принципы, которые их обуславливают

Статья посвящена раскрытию основных принципов, определяющих специфику административной юстиции, и их всестороннему изучению. В частности, в статье представлены восприятия разных юристов на принципы административной юстиции, а также особенности, предусмотренные для них законодательством разных государств, проблемы существующие вокруг них.

В то же время в статье упоминались существующие проблемные правовые нормы о важнейших принципах административной юстиции, проводились сравнения с другими процессуальными принципами, делались выводы представляя соответствующие предложения.

Ключевые слова: *Принципы административной юстиции, принцип «ex officio», принцип состязательности, принцип диспозитивности, административное судопроизводство, специализированная юстиция.*

Petros Vardanyan

Head of the First Division of the Control Department of the Ministry of Justice
Applicant at the Public Administration Academy of the RA

SUMMARY

Features of the system of administrative justice and the principles conditioning them

The article is dedicated to reveal the basic principles that determine the specifics of administrative justice and their comprehensive study. In particular, the article presents the perceptions of different lawyers on the principles of administrative justice, as well as the specifics provided for them by the legislation of different states, the existing problems around them.

At the same time, the article referred to the existing problematic legal regulations on the most important principles of administrative justice, made comparisons with other procedural principles, drew conclusions making relevant proposals.

Key words: *Principles of administrative justice, the principle of “ex officio”, the principle of adversarial, the principle of dispositivity, administrative proceedings, specialized justice.*

Բնագիրը ներկայացվել է 25.03.2022թ.

Ընդունվել է տպագրության 29.03.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Շաթիրյանը